«ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# 2024-2029



**Բովանդակություն**

Ներածություն – էջ 3
**1.**Դպրոցի առաքելությունը – էջ 4
**2.** Զարգացման ծրագիր. հիմնական նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները – էջ 5
**3.** Կրթական կարիքներն ըստ ոլորտի – էջ 8
**4.**Ուսումնական հաստատության գործունեությունը. ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին – էջ 9
**ա.** Համապատասխանությունը պետության կրթական քաղաքական միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին – էջ 13
**բ.** Դպրոցի ներկազմակերպական կառուցվածքը – էջ 14
**գ.** Հաստատության գործունեության վերլուծությունը ՝ ըստ նպատակադրման ոլորտների – էջ 19
**5.** Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը.- էջ 21
**ա.** ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն
**բ.** հաստատության նյութատեխնիկական բազան, ռեսուրսները
**6.** Կառավարման և խորհրդակցական մարմիններ – էջ 30
կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն – էջ 31
**7.**Համագործակցությունը տեղական ինքնակառավարման, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ – էջ 38
Ուսումնական միջավայր – էջ 41
**8.** Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը – էջ 43
**9.** Հաստատության կողմից օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը – էջ 46
**10.** Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը – էջ 48
**11.** Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն – էջ 59
**12.** Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն – էջ 61
**13.** Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից – էջ 62
**14.** Առկա հիմնախնդիրներն ըստ ոլորտների – էջ 64
**15.** Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակների և խնդիրների սահմանումը, պատասխանատուները նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը – էջ 66

- Արդյունքների գնահատման չափանիշները.
- Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

- Ռիսկեր

**16.**Զարգացման ծրագրի արդյունքների գնահատման չափանիշները – էջ 91

**17.** Վերահսկողության մեխանիզմներ – էջ 103

## Ներածություն

**Կրթությունը շարժում է մթությունից դեպի լույս:**

Ժամանակակից աշխարհում կրթությունը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ:

Որպես պետականության կայացման երաշխիք՝ կրթական համակարգի պահպանումը, նրա հետագա զարգացումը համարվում են ազգային կարևորագույն խնդիր: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Վաղվա քաղաքացու ձևավորման գործընթացի իրականացման ու պատասխանատվության առավել գործնական մասը պատկանում է դպրոցին: Դպրոցը պետք է երաշխավորի ժողովրդական հասարակության համար ազատ անհատի ձևավորումը՝ խթանելով լեզվական, սովորել սովորելու, տնտեսական, մեդիա, ինքնաճանաչողական, վերլուծական և քննադատական մտածողությանը:

Դպրոցի դերը հասարակության մեջ և հասարակության պահանջներին համապատասխանեցնելը էականորեն կախված է դպրոցի կառավարման արդյունավետությունից: Դպրոցի կառավարման հիմնական նպատակն է բոլոր միջոցների, ռեսուրսների արդյունավետ և պլանավորված օգտագործումը:

# 1.Դպրոցի առաքելությունը

**Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:**

Այս առաքելության իրականացման ճանապարհին կարևորում եմ կրթական գործընթացում ժամանակավրեպ չլինելը: Փոփոխությունների համակարգված իրականացման համար որպես ելակետ եմ ընդունում զարգացման սույն ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում:

Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն: Եվ դպրոցը այն վայրն է, որտեղ պետք է ձևավորվեն 21-րդ դարի թվային պահանջներով զինված, ինքնուրույն մտածող, ժամանակի հետ համընթաց քայլող, ստեղծագործող, մարդասեր, կրթված, հայրենասեր անհատներ, ովքեր կերտելու են ապագայի Հայաստանը՝ ուժեղ, անկախ, մրցունակ և ազգային արժեքների պահպանմամբ: Մեր խնդիրն է ժամանակի պահանջներին համապատասխան սերունդ կրթելն ու դաստիարակելը, ապագայի մարտահրավերներին դիմակայելու և պայքարելու պատրաստ և ունակ մարդ ձևավորելը, ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործական այնպիսի միջավայրի ձևավորումը, որը կապահովի յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական հմտությունների, քննադատական, վերլուծական, համեմատական մտածողության անհատական ունակությունների զարգացումը, մշտապես սովորելու ու կատարելագործվելու կարողություններ, ցանկություններ ու հնարավորություններ, սովորողների մասնագիտական կողմնորոշմանն աջակցելը:

Գյուլագարակի միջնակարգ դպրոցի առաքելությունը սովորողներին ազգային դպրոցի տարրական և հիմնական կրթության հենքի վրա մատչելի, հավասար և որակյալ միջնակարգ կրթություն տալն է, սովորելու ունակություն ունեցող, սովորելն արժևորող քաղաքացիներ ձևավորելն է՝ շարունակելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով քաղաքացիներ դաստիարակելու աշխատանքը:

**Գյուլագարակի միջնակարգ դպրոցի առաքելության առանցքն եմ համարում միջնակարգ որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ կրթական միջավայրի ձևավորումը՝ կարևորելով յուրաքանչյուր սովորողի անհատական կարողություններն ու ունակությունները, որն իրատեսական կդառնա գործողությունների ճիշտ պլանավորման /առաջնահերթությունների սահմանում/, ռեսուրսների ճիշտ կառավարման /մարդկային և ֆինանսական / և դպրոցի կառավարման ընթացքում անսահման նվիրումի, մեծ պատասխանատվության և համագործակցային աշխատանքի դեպքում:**

# 2.Զարգացման ծրագիր

# 2024-2029թթ.

«ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության կրթության, մշակույթի և սպորտի նախարարի 22. 09. 2022թ. N 35-Ն հրամանով հաստատված պետական հանրակրթական զարգացման ծրագրի մշակման պահանջներին և ձևաչափին համապատասխան: Հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարության փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի պահանջը: Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 18 ապրիլի 2023թ. № 399-Ա հրամանի պահանջները:

Ինչպես նաև

- «Կրթության մասին» ՀՀ օրենքը
- «Հանրակրթության մասին օրենքը: (2022թ. փետրվարի 9)
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ Հանրակրթության պետական չափորոշիչը
- («Հավելված ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 2 N 137-Ն որոշման) օրինակելի կանոնադրությունը
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը
- Հայաստանի Հանրապետության կառավարության 22 սեպտեմբերի 2022թ. N 1481-Ն որոշումը (Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ Պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանելու մասին
- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 7-ը դեկտեմբերի 2022թ. N 79-Ն հրամանը (կատարված փոփոխություններ՝ 04 սեպտեմբեր 2023թ. N 112-Ն)
- Առողջապահության նախարարի 28 մարտի 2017 N 12-Մ հրամանը
- «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան»
- Դպրոցի կանոնադրություն
- Ներքին իրավական ակտեր

| Նպատակը | Խնդիրները | Ակնկալվող արդյունքները |
| --- | --- | --- |
| • 21-րդ դարի պահանջներին համապատասխան կրթության ապահովում.<br>ա/բազմակողմանիորեն զարգացած<br>բ/ հայրենասեր<br>գ/ազգային արժեքներ կրող<br>դ/համաշխարհային մշակույթին ծանոթ<br>ե/մասնագիտորեն կողմնորոշված<br>զ/ստեղծարար, նախաձեռնող<br>է/ժամանակակից նորագույն տեխնոլոգիաներին տիրապետող<br>ը/գլոբալիզացիայի և տեղական մարտահրավերներին պատրաստ<br>թ/կոմպետենտ՝ պատշաճ և արդյունավետ կերպով տարատեսակ իրավիճակներին արձագանքող քաղաքացիների ձևավորում<br>• Համայնքի կարիքներին համապատասխանող միջավայրի ապահովում | • Արդիականացված կրթական համապատասխան միջավայրի ձևավորում.<br>• նյութատեխնիկական բազայի հարստացում/ լաբորատորիաների, ՏՀՏ միջոցների ձեռքբերում, գրադարանի թվայնացում և այլն/<br><br>●Տարբեր ծրագրերի, գործողութ-յունների մշակում, որոնք կմոտիվացնեն աշակերտներին և կապահովեն սովորողների կողմից չափորոշչային պահանջների յուրացումը<br><br>• Տարաբնույթ միջոցառումների,նախագծերի, հետազոտական աշխատանքների ակտիվ կազմակերպում<br>• Ուսուցչական կազմի մասնագիտական կատարելագործման, տարակարգ ստանալու և կամավոր ատեստավորմանը մասնակցելու խրախուսում | • Կահավորված և արդիական սարքավորումներով հագեցած սանհիտարահիգիենիկ , անվտանգ, համընդհանուր մատչելի շենք, բարեկարգ կրթական միջավայր /ժամանակակից լաբորատորիաներ, վերանորոգված և անհրաժեշտ մարզագույքով մարզադահլիճ, թվայնացած գրադարան, ՏՀՏ միջոցներ, նոր ուսումնական գույք/<br><br>• Կրթության որակի բարձրացում՝ նոր ՀՊՉ_ի պահանջներին համապատասխան<br><br>• Համընդհանուր ներառական կրթության շարունակականության իրականացում /խելամիտ հարամարեցումների ապահովում/<br><br>• Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացում |

| | | |
|---|---|---|
| | • Համագործակցությունների ընդլայնում | • Առարկայական օլիմպիադաներին մասնակից աշակերտների թվաքանակի ավելացում<br><br>• Արտադասարանական խմբակներում սովորողների ակտիվ ներգրավվածության ապահովում<br><br>• Կրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի իրականացում<br><br>• Որակավորված և սահմանված ստանդարտներին համա-պատասխան ատեստավորված /նորարար, կարողունակ, ստեղծագործ/ մանկավարժական կազմ՝ արժանապատիվ վարձատրությամբ<br><br>• Համագործակցային, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ.<br><br>• Աշակերտ-ուսուցիչ-ծնող-համայնք սերտ փոխհարաբերություններ |

# 3.ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏԻ

## 1.Կառավարման ոլորտ

●կրթական կարիքների բացահայտում, համապատասխան գործողությունների մշակում, իրագործում

●կրթական գործընթացի մասնակիցների ակտիվ ներգրավում / ծնողական համայնք, կառավարման մարմիններ, համայնքի, հասարակության ակտիվ խմբեր /

●արդյունավետ ղեկավարում / տնօրեն, տեղակալ, մ/մ ղեկավարներ, դասղեկներ/

●մասնակցային, ներառական, բազմակարծիք և համագործակցային աշխատանք

●Շարունակական վերահսկողություն և հետևողական աշխատանք ներքին կարգապահական կանոնների կատարման շուրջ / կառավարման և խորհրդակցական մարմիններ/

●ՏՀՏ միջոցների ավելացում, համապատասխան ռեսուրսներ

/ դասընթացներ, վերապատրաստումներ/

●սովորողների ինքնաարտահայտման, ինքնուրույն ուսումնական գործունեության ծավալման, ստեղծագործական կարողությունների զարգացում, ազատության երաշխավորում /ինքնակառավարման շաբաթներ, նախագծային հետազոտական աշխատանքներ, ճանաչողական էքսկուրսիաներ , բանավեճեր, քննարկումներ/

## 2.Ուսումնադաստիարակչական աշխատանքներ

●Սովորողների սովորելու մոտիվացիա

●Կրթության որակի բարձրացմանը նպաստող նորարական և արդյունավետ մոտեցումների ներդրում, նորագույն տեխնոլոգիաների կիրառում

●Սովորողի կրթական կարիքի գնահատում, կրթական կարիքի բավարարում տարբերակված ուսուցմամբ

●Քննադատական, վերլուծական, ստեղծագործական մտածողության ձևավորում

●Դպրոց- ծնող-ուսուցիչ արդյունավետ համագործակցություն

### 3.Վարչատնտեսական գործունեություն

●Բյուջեի ճիշտ պլանավորում

●Ուսումնական միջավայրի լիարժեք ապահովում

●Ռեսուրսների օպտիմալ կառավարում

## 4.Ուսումնական հաստատության գործունեությունը

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի , այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ, կրթության կազմակերպումն է զարգացման առանձնահատկություններին համապատասխան, իսկ նպատակը՝ հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների և կրթական գործընթացին առավելագույն մասնակցության ապահովումը:

Գյուլագարակի միջնակարգ դպրոցը մշտապես եղել է ժամանակին համապատասխան գործող, ՀՀ պետական կրթական քաղաքականության առաջնահերթություններին հետևող և իր առջև դրված հիմնախնդիրներն իրականացնող ուսումնական հաստատություն: Դպրոցի առաջնահերթ խնդիրն է ՀՊՉ-ով սահմանված կրթության կազմակերպումը, որի գաղափարական հիմքում ընկած է բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայրի ձևավորումը:

## Դպրոցի պատմությունը

Գյուլագարակի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1908 թ.-ին, մշտապես ունեցել է մեծ հեղինակություն, այդ իսկ պատճառով այստեղ են հաճախել շրջակա գյուղերի բարձր դասարանի աշակերտները: Դպրոցը այժմ էլ տարածաշրջանում ունի բարձր վարկանիշ. այստեղ սովորում են նաև համայնքի այլ գյուղերից /Պուշկինո, Հոբարձի, Ամրակից/ հաճախող աշակերտներ: Դպրոցի շատ շրջանավարտներ տարիներ շարունակ զբաղեցրել են և այժմ էլ զբաղեցնում են տարբեր բարձր պաշտոններ կրթության և գիտության ոլորտներում: Օլիմպիական չեմպիոն Հրանտ Շահինյանը ևս եղել է Գյուլագարակի միջնակարգ դպրոցի սան:

1988թ.-ի ավերիչ երկրաշարժի պատճառով հիմնահատակ ավերվել է դպրոցը, արհավիրքին դպրոցում զոհ են դարձել 6 աշակերտներ, ուսուցիչ և ծնող: Այնուհետև դասերն իրականացվել են տնակային պայմաններում:

1992-1993 թթ. դպրոցն իր գործունեությունը շարունակել է նոր կառուցված շենքում, որն ի սկզբանե նախատեսված չի եղել որպես դպրոցական շենք և հարմարեցվել է որպես դպրոց՝ չհամապատասխանելով աշակերտների թվաքանակին, որի պատճառով դասերն իրականացվել են երկհերթ՝ մինչև նոր մասնաշենքի կառուցումը: 2001 թ.-ին կառուցվել է 2-րդ մասնաշենքը, իսկ 2010թ.-ին ՝ մարզադահլիճը: 2012թ.-ին դպրոցում բացվել է նախակրթարան, որը գործել է մինչև 2022թ.՝ մինչև գյուղի մանկապարտեզի գործելը:

## Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին

Հաստատության անվանումը – «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հաստատության հասցեն – ՀՀ Լոռու մարզ, գ. Գյուլագարակ, փողոց 1, շենք 5

Էլեկտրոնային հասցեն – gyulagarak@schools.am
Դպրոցի ինտերնետային կայքը - http://gyulagarak.schoolsite.am/

Փոստային դասիչ – 1910

Դպրոցի հիմնադրումը – 1908թ.

Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը – առաջին մասնաշենք՝ 1992թ., երկրորդ մասնաշենք՝ 2001թ.

Դպրոցի կանոնադրությունը – 19.09.2017թ. / վերջին փոփոխություն` 29.06.2022թ./

Պետական ռեգիստրում գրանցման համարը – 92.210.00458

Պետական ռեգիստրում գրանցման ամսաթիվը – 2003-01-22

Դպրոցի շենքը – հարմարեցված

Մակերեսը – 1700$մ^2$

Դպրոցի տիպը ըստ իրականացվող հիմական ծրագրերի – ընդհանուր

Դպրոցի տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանների – միջնակարգ՝ ըստ կրթական ծրագրերի (1-12-րդ դասարան)

Աշխատանքային շաբաթ – 5-օրյա

Աշխատանքային ռեժիմը – միահերթ

Հարկայնությունը – 2

Ջրամատակարարումը – շուրջօրյա կենտրոնացված

Կոյուղացումը – կենտրոնացված

Ջեռուցումը – կենտրոնացված

Նախագծային հզորություն – 440 աշակերտի համար

Փաստացի հաճախող աշակերտների թիվը – 331

2023-2024 ուստարում Գյուլագարակի միջնակարգ դպրոցում ընդգրկված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 19 աշակերտից այս պահին սովորում է 9 աշակերտ, 10 աշակերտ տեղափոխվել են այլ բնակավայրեր

ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը – 23

Տնային ուսուցում-4



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՏԱՐՐԱԿԱՆ հանրակրթական

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0235

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Լոռու մարզ, գ. Գյուլագարակ

Լոռու մարզ, գ. Գյուլագարակ

Իրավունք ունի իրականացնելու

Տարրական հանրակրթական

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Ա. Աշոտյան

Կ.Տ. «30» մայիսի 2011 թ.

Անժամկետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ հանրակրթական

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0229

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Լոռու մարզ, գ. Գյուլագարակ

Լոռու մարզ, գ. Գյուլագարակ

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական հանրակրթական

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Ա. Աշոտյան

Կ.Տ. «30» մայիսի 2011 թ.

Անժամկետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՄԻՋՆԱԿԱՐԳ հանրակրթական

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0190

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Լոռու մարզ, գ. Գյուլագարակ

Լոռու մարզ, գ. Գյուլագարակ

Իրավունք ունի իրականացնելու

Միջնակարգ հանրակրթական

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Ա. Աշոտյան

Կ.Տ. «30» մայիսի 2011 թ.

Անժամկետ

Գյուլագարակի միջնակարգ դպրոցի տարածքը ցանկապատված է , տեղադրված են տեսախցիկներ, ունի մարզահրապարակ, շարահրապարակ, ծաղկանոց, 44-օրյա հերոսամարտի հերոսների հիշատակը հավերժացնող ծառերի պուրակ / Ֆրանսիայում բնակվող մեր դպրոցի նախկին աշակերտուհու աջակցություն /:

Ամեն տարի դպրոցում իրականացվում են վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ, փոխարինվում են դուռ-պատուհաններ: Հաշվի առնելով ֆինանսական միջոցները՝ աշխատանքները միանգամից իրականացնել հնարավոր չէ:

Շնորհիվ հետևողականության, թերությունների ժամանակին վերացման և կանխարգելման՝ դպրոցը գտնվում է բարեկարգ վիճակում, թեև վերանորոգման որոշակի խնդիրներ են առկա /մարզադահլիճի վերանորոգում, տանիքի փոխարինում, որոշ դասարանների հատակների փոխարինում/, շինության հետնամասի և ճակատային մասի ծեփապատում, որոնց համար անհրաժեշտ կլինի պետական աջակցություն: Գույքի համալրման և նորացման անհրաժեշտություն կա, չնայած

համակարգչային սենյակի, երեք դասարանների, խոհանոցի, ճաշարանի, հանդիսությունների դահլիճի գույքը նորացվել է /բարերարներ, ՏԻԳ , ՄԱԿ –ի Պարենային ծրագիր, համայնքապետարան /:

## ա. Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Համապատասխան պետության կրթական քաղաքականության սկզբունքներին՝ դպրոցը իր գործունեությունն իրականացնում է սովորողների հայրենասիրական դաստիարակությամբ, ժողովրդավարական սկզբունքների ապահովմամբ, ԿԱՊԿՈւ աշակերտների ինտեգրմամբ, համայնքի կարիքներին և հնարավորություններին համապատասխան:

Դպրոցում կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ՝ տարբեր տոներին, հիշատակի օրերին նվիրված , բաց դասեր, նախագծային աշխատանքներ,սպորտլանդիաներ, քննարկումներ, հանդիպումներ / ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի և 44-օրյա պատերազմին մասնակցած հերոսների, զինվորականների, ոստիկանության, առողջապահության ներկայացուցիչների, <<Քո արվեստը դպրոցում>> ծրագրի շրջանակներում՝ արվեստագետների և այլն/:

«Փոփոխությունների թատրոն» մշակութային ՀԿ և ՀՄԿ-ի համագործակցությամբ դպրոցում կայացել է կիբերբուլինգին նվիրված ներկայացում, սեմինար պարապմունքներ՝ վառելիքի տնտեսման, էներգիաարդյունավետության և այլընտրանքային էներգիայի հնարավորությունների վերաբերյալ, դրամաշնորային ծրագրերի վերաբերյալ, աշակերտների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, Գյումրու ՍՊՏԾ-ի կողմից նաև տեսաֆիլմի դիտում, տարիանում:

Դպրոցը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում համայնքում կազմակերպվող միջոցառումներին, շաբաթօրյակներին, ծառատունկին :Բոլոր աշխատանքներին՝թե ներդպրոցական, թե արտադպրոցական, ինտեգրվում են նաև ԿԱՊԿՈՒ սովորողները ՝ ԲՄԹ-ի աջակցությամբ:

Դպրոցի մեծ թվով աշակերտներ հաճախում են համայնքում գործող Արվեստի դպրոց, մասնակցում երգի, պարի, կերպարվեստի խմբակների, սովորում նվագել տարբեր երաժշտական գործիքներ՝ դուդուկ, կլարնետ, քանոն, դաշնամուր, ուդ, ջութակ, դհոլ: Համայնքային տարբեր սպորտային խմբակներում ևս ընդգրկված են մեծաթիվ սովորողներ:

Աշակերտների կողմից համայնքում իրականացվել են նախագծային աշխատանքներ ՝ ապահովելով համայնք- դպրոց կապը՝ <<Լոռեցի երիտասարդները՝ բարենպաստ կլիմայի էկոդեսպաններ>>, <<Պարարտանյութերի և թունաքիմիկատների սխալ պահպանումը, օգտագործումը և չարաշահումը գյուղատնտեսության մեջ>> /ԿԶՆԱԿ/:

Մեր սաները մասնակցում են ոչ միայն համայնքային, այլև տարածքային, մարզային, հանրապետական տարբեր հանդիպումների, միջոցառումների, սպորտլանդիաների, մրցույթների /<<Մեղու>>, <<Կենգուրու>>,<<Koreez>>/, փառատոնների, նախագծերի /ասմունքի, ռոբոտաշինության, մեդիագրագիտության, կերպարվեստի, շախմատի, երաժշտության, բնապահպանական/ և ցուցաբերում լավագույն արդյունք՝ արժանանալով շնորհակալագրերի ու պատվոգրերի :

Դպրոցը համագործակցում է տարբեր ուսումնական հաստատությունների հետ՝ համայնքային և տարածաշրջանային դպրոցներ,մենթոր դպրոց/ Ստեփանավանի ավագ դպրոց/, քոլեջներ, բուհեր: Ոչ միայն դպրոցի աշակերտներն են այցեր կատարում, այլ կատարվում են այցելություններ նաև մեր դպրոց տարբեր կրթօջախներից. Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի աշակերտներ , ուսուցիչներ, ԵՊՀ ,ՎՊՀ ուսանողներ, դասախոսներ :

Կատարվում են այցեր Ստեփանավանի և Պուշկինոյի N զորամասեր, թանգարաններ, մշակութային տարբեր օջախներ, կազմակերպվում են ճանաչողական էքսկուրսիաներ, արշավներ:

Քանի որ դեռևս կան շատ անելիքներ, պահանջվում է հետևողական , պատասխանատու մոտեցմամբ և հստակ պլանավորմամբ շարունակել համագործակցային և մասնակցային միջավայրի ստեղծումն ու միասնական նպատակի իրականացումը:

## բ. Դպրոցի ներկազմակերպական կառուցվածքը.

1. Միացյալ կառավարման խորհուրդ՝ բաղկացած 14 անդամներից
2. Մանկավարժական խորհուրդ՝ բաղկացած 32 անդամից
3. Առարկայական մեթոդական միավորումներ՝
   ա/ հումանիտար

բ/ բնագիտամաթեմատիկական
գ/ տարրական կրթություն
դ/ օտար լեզուներ

4. Ծնողական խորհուրդ՝ բաղկացած 15 անդամից

5. Աշակերտական խորհուրդ՝ բաղկացած 18 անդամից

6. Տնօրեն – 1

7. Տնօրենի տեղակալ – 0,75

8. Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ – 0,5

9. Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ – 0,75

10. Հոգեբան – 0,75

11. Ուսուցչի օգնական – 2,5

12. Ջինդեկ – 1

13. Գլխավոր հաշվապահ – 1

## Ուսումնաօժանդակ անձնակազմ

- Անձնակազմի կառավարման մասնագետ /գործավար/-1
- Գրադարանավար-1
- Քաղպաշտպանության շտաբի պետ- 0,3
- Լաբորանտ-0,5

- Էլեկտրոնային  դասավանդման ապահովման մասնագետ-0,75
- Պահակ-4
- Հավաքարար-3
- Տնտեսվար-1 / մինչև  համակարգողի  առկայությունը/
- Էլեկտրագետ-0,75
- Սանտեխնիկ- 0,5
- Հնոցապան-2
- Խոհարար- 1

## Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

| Սովորողնե րի թիվը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | Փոփոխություննե րի դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|---|
| 1 -ին դասարան | 34 | 40 | 32 | 26 | Նվազում |
| 2-րդ դասարան | 26 | 33 | 40 | 31 | Նվազում |
| 3-րդ դասարան | 34 | 26 | 33 | 38 | Աճ |
| 4-րդ դասարան | 41 | 31 | 26 | 32 | Աճ |
| 5-րդ դասարան | 42 | 40 | 31 | 25 | Նվազում |
| 6-րդ դասարան | 29 | 41 | 38 | 31 | Նվազում |
| 7-րդ դասարան | 34 | 31 | 40 | 36 | Նվազում |
| 8 -րդ դասարան | 25 | 33 | 32 | 38 | Աճ |
| 9-րդ դասարան | 24 | 25 | 32 | 32 | Անփոփոխ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10-րդ դասարան | 11 | 18 | 16 | 18 | Աճ |
| 11-րդ դասարան | 11 | 7 | 10 | 13 | Աճ |
| 12-րդ դասարան | 27 | 10 | 7 | 11 | Աճ |
| Ընդամենը | 338 | 335 | 337 | 331 | Նվազում |

:

## Ուսումնական հաստատության շենքային պայմանները

| **Անվանում** | **Քանակ** | **Մակերես** |
|---|---|---|
| Դասասենյակ | 15 | 8 դասարան-յուրաք.— 30,7 մ2<br>2 դասարան-յուրաք.- 27,5 մ2<br>1 դասարան -58,4 մ2<br>1 դասարան -36,6 մ2<br>1 դասարան- 20,8 մ2<br>1 դասարան- 37,2 մ2<br>1 դասարան -29,7 մ2 |
| առանձնասենյակ | 4 | 21,9 մ2<br>10,2 մ2<br>13,8 մ2<br>22,7 մ2 |

| | | |
|---|---|---|
| ուսուցչանոց | 1 | 30,7 մ2 |
| ՆԶՊ սենյակ | 1 | 28,4 մ2 |
| <<Արմաթ>> լաբորատորիա | 1 | 30,7 մ2 |
| հանդիսությունների դահլիճ | 1 | 58,4 մ2 |
| գրադարան | 1 | 30,7 մ2 |
| համակարգչային դասասենյակ | 1 | 39,6 մ2 |
| խոհանոց | 1 | 15 մ2 |
| ճաշարան | 1 | 20,2 մ2 |
| Շախմատի սենյակ | 1 | 30,7 մ2 |
| լաբորատորիա | 1 | 25,1 մ2 |
| Արհեստանոց | 1 | 36,6 մ2 |
| մարզադահլիճ | 1 | 271,4 մ2 |
| Մարզահրապարակ | 1 | 1610մ$^2$ |

| | | |
|---|---|---|
| սանհանգույց | 3 | 58,2 մ2 |
| Կաթսայատուն | 1 | 11,9 մ2 |

## գ. Հաստատության գործունեության վերլուծություն, նպատակադրման ոլորտներ

### 2019-2023թթ. դպրոցում իրականացրած աշխատանքները

/վերանորոգման աշխատանքներ, նյութատեխնիկական բազայի հարստացում/

| | |
|---|---|
| 2019 | Դպրոցի ֆինանսական միջոցներով ցանցապատվել է ֆուտբոլի դաշտը,<br>կոսմետիկ վերանորոգվել են դասասենյակներն ու միջանցքները,<br>փոխարինվել են դռներ- 6,2 մ²<br>Գնվել է SMART հեռուստացույց, երաժշտական կենտրոն<br>Ամերիկահայ բարերար Ջորջ Ասադորիանի կողմից կահավորվել է համակարգչային սենյակը՝ 11 համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ -1, պրոյեկտոր-1<br>ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից տրամադրվել է մարզագույք՝ գնդակ 16 հատ, ֆուտբոլի ժիլետ 12 հատ, պոմպ 1 հատ |
| 2020 | ՀՀ ԿԳՄՍՆ և Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից բացվել է << Արմաթ>> լաբորատորիան<br>Փոխարինվել են ջրագծի և կոյուղագծի խողովակները<br><br>ԾԻԳ -ի կողմից տրամադրվել է գույք՝ հանդիսությունների դահլիճի աթոռներ -80 հատ, համակարգչային |

| | |
|---|---|
| | սեղան -15 հատ, աշակերտական սեղան- 15 հատ, աթոռ- 30 հատ , գրատախտակ- 3 հատ<br>ՀՀ ԿԳՄՍՆ մրցութային ծրագրի շրջանակներում հաստատված ցանկով «Սպորտ Միթի» ՍՊԸ-ի կողմից տրամադրվել է մարզագույք՝ մարմնամարզական ներքնակ 6 հատ, պտտաձող 1 հատ, մագլցման պարան 1 հատ, բարձրացատկի կանգնակներ և ձող 1 հատ, մարմնամարզական պատ 2 հատ, կամրջակ 1 հատ |
| 2021 | ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ և դպրոցի ֆինանսական միջոցների հաշվին վերանորոգվել են դպրոցի ճաշարանը, խոհանոցը, ընդլայնվել է ճաշասենյակի տարածքը, տեղադրվել է խոհանոցային տեխնիկա, վերանորոգվել են առաջին մասնաշենքի սանհանգույցները -27,5 մ²<br>Հոլանդահայ բարերար Տավրոս Ասլանյանի կողմից տրամադրվել է մեկ դասարանի գույք `սեղան-, աթոռ-,մարկերային գրատախտակ 1, համակարգիչ -1<br>Դպրոցի ֆինանսական միջոցներով փոխարինվել են կաթսայատան գազային բոցամուղը, գազի ֆիլտրը<br>Ֆրանսիայում բնակվող մեր դպրոցի նախկին աշակերտուհու օժանդակությամբ կատարվել է ծառատունկ, տեղադրվել է հուշաքար<br>Դպրոցի գրադարանը համալրվել է գրականությամբ նվիրատվության շնորհիվ<br>Համայնքապետարանի աջակցությամբ փոխվել են դպրոցի մուտքի դռներն ու պատուհանները եվրոդռներով- 7,4 մ² և եվրոպատուհաններով՝ -21,6 մ²<br>ՀՀ ԿԳՄՍՆ կողմից 3 պլանշետ |
| 2022 | Դպրոցի ֆինանսական միջոցներով վերանորոգվել են զինպահեստը, արհեստանոցը, առաջին հարկի դասարանների հատակները,<br>Փոխարինվել են դռներ՝-7,2 մ² , պատուհաններ՝ - 20,5մ²<br>Գրադարանին նվիրաբերվել է գրականություն համագյուղացու կողմից |
| 2023 | Դպրոցի ֆինանսական միջոցներով ներկվել են դասարանների, միջանցքների հատակներն ու պատերը, ծեփապատվել են շենքի հիմնապատերի որոշ մասերը<br>Համայնքի աջակցությամբ/500000 դրամ/ ձեռք է բերվել ճաշասենյակի գույք՝ սեղան-5, աթոռ-5 |

## 5. Իրավիճակի վերլուծությունը . ուժեղ և թույլ կողմերը

### ա. Շենքային պայմաններ

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ➢ ԿԱՊԿՈՒ սովորող անձանց համար նախատեսված թեքահարթակ մուտքի մոտ<br>➢ Բարեկարգ, վերանորոգված դասասենյակներ, միջանցքներ<br>➢ Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար<br>➢ Կենտրոնացված ջեռուցման համակարգի առկայություն, դասարաններում, միջանցքներում և սանհանգույցներում պահանջվող ջերմաստիճանի ապահովվածություն<br>➢ Մշտական ջրով առկայություն և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովվածություն<br>➢ Բարեկարգ ուսուցչանոցի առկայությունը: Ուսուցչանոցն ապահովված է ինտերնետ կապով և համակարգչով:<br>➢ Բակային տարածքում խնամված ծաղկանոցի, նստարանների առկայություն<br>➢ Վերանորոգված խոհանոց<br>➢ Վերանորոգված սանհանգույցներ<br>➢ Պահակակետի, տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ նյութերի համար նախատեսված առանձնացված պահեստային մաս<br>➢ | ➢ Դպրոցի շենքը տիպային չէ, հարմարեցված է<br>➢ Մարզադահլիճը կարիք ունի վերանորոգման<br>➢ Կա տանիքի վերանորոգման անհրաժեշտություն<br>➢ Ժամանակակից պահանջներով կահավորված լաբորատորիաների, առարկայական սենյակների բացակայությունը:<br>➢ Ապաստարանի բացակայություն / անհրաժեշտության դեպքում օգտագործվելու է համայնքապետարանի կողմից տրամադրված տարածքը/<br>➢ Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված սանհանգույցների բացակայությունը:<br>➢ Բուժկետի բացակայություն / առկա է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայք և պարագաներ հատուկ առանձնացված տարածքում/ |

# բ.Հաստատության նյութատեխնիկական բազան, ռեսուրսները

## Գրադարան

Գրադարանը զբաղեցնում է 30,7 մ² տարածք, վերջին անգամ համալրվել է 2023 թվականին համայնքի բնակչի կողմից անձնական գրադարան նվիրաբերելու միջոցով: Անընդհատ հետևողական աշխատանք է տարվում գրադարանից օգտվող աշակերտների թիվը մեծացնելու, աշակերտների մոտ ընթերցասիրություն առաջացնելու ուղղությամբ:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | |
|---|---|---|
| • Առկա է 1 համակարգիչ<br>• Գրադարանային ֆոնդում առկա գրքերի / բացառությամբ դասագրքերի / ընդհանուր թիվը 3340 գիրք<br>• Գրադարանից օգտվող աշակերտներ, մանկավարժներ<br>• Կազմակերպվում են գրքի քննարկումներ, գրողներին նվիրված միջոցառումներ, փոքրիկ բեմադրություններ<br>• Առկա են առանձին ցուցապահարաններ և գրադարակներ ըստ բնագավառների՝ սովորողների ինքնուրույն ընտրելու և օգտվելու համար, ուսուցիչների համար առանձնացված է մեթոդական գրականության անկյուն: | • Ունի վերանորոգման կարիք<br>• Տարածքը փոքր է<br>• Չկա առանձին ընթերցասրահ<br>• Թվայնացված չէ<br>• Ծրագրային գրքերի պակաս<br>• ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հարմարեցված չէ<br>• Առկա գրքերի մաշվածություն |  |

## Համակարգչային դասասենյակ

Համակարգչային դասասենյակը զբաղեցնում է 39,6 $մ^2$ տարածք,վերանորոգված է, բարեկարգ: Այն կահավորվել է 2019 թվականին ամերիկահայ բարերար Ջորջ Աստղորիանի հովանավորությամբ: Այստեղ կազմակերպվում են ինֆորմատիկայի, ԹԳՀԳ առարկայի դասաժամերը, համակարգչային դասեր տարբեր առարկաներից, կատարվում են էլեկտրոնային լաբորատոր փորձեր, ներկայացվում են իրականացրած նախագծային աշխատանքները: Համակարգիչների պակաս քանակի պատճառով մեկ համակարգչի մոտ աշխատում է 2-3 աշակերտ:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | |
|---|---|---|
| • Առկա է 11 համակարգիչ<br>• 1 պրոյեկտոր<br>• 1 էլեկտրոնային գրատախտակ<br>• 1 գրատախտակ<br>• 3 պլանշետ<br>• Առկա է անվճար ուսումնական կապ<br>• Ազդանշանային համակարգ | • Տպիչ սարքի բացակայություն<br>• Դյուրակիր համակարգիչների /10 հատ / և համակարգիչների անհրաժեշտություն /10 հատ/ |  |

## Արմաթ լաբորատորիա

Զբաղեցնում է 30,7 $մ^2$ տարածք, այն կահավորվել է ՀՀ ԿԳՄՍՆ և Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից: Լաբորատորիա հաճախող սաները բազմիցս մասնակցել են ռոբոտաշինության մրցույթների, գրանցել

հաջողություններ:  / Արմ Ռոբոտիքս <<Ինքնակառավարվող ռոբոտները խելացի ագարակում>> մրցույթում թիմն անցել է եզրափակիչ փուլ /:

| Ցուցանիշ | Տվյալներ | |
|---|---|---|
| Համակարգիչների թիվը | 7 |  |
| Եռաչափ տպիչ | 1 | |
| ԹՎՀ շաղափային և լազերային հաստոց | 1 | |
| ռոբոտի հավաքածու | 1 | |
| Անվճար ուսումնական կապ | | |

## Մարզադահլիճ

Մարզադահլիճը զբաղեցնում է  271,4 մ² տարածք, կառուցվել է 2010 թվականին  և մինչ այսօր չի  վերանորոգվել: Թեև հատակը կարիք ունի փոխարինման, տեղ- տեղ մասնակի ամրացվել է, որպեսզի ֆիզկուլտուրայի դասաժամերն անցնեն նպատակային: Վերանորոգված դահլիճ ունենալու պարագայում  կկազմակերպվեն սպորտային  խմբակներ, որպեսզի մեր սաներն ստիպված չլինեն մասնակցել համայնքի այլ գյուղերում կազմակերպվող խմբակներին:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | |
|---|---|---|
| • Առկա է ջեռուցման համակարգ<br>• Հանդերձարաններ<br>• Օդափոխության համակարգ<br>• Սանհանգույցներ<br>• Մշտական ջուր<br>• Հիմնականում անհրաժեշտ մարզագույքի առկայություն՝ շվեդական պատ, գնդակներ, մագլցման պարան, | • Հատակի ամբողջովին փոխման և ընդհանուր վերանորոգման կարիք, քանի որ շահագործումից հետո վերանորոգում ընդհանրապես չի կատարվել<br>• Առկա է լոգասենյակ, բայց չի գործում վերանորոգման կարիք ունենալու պատճառով<br>• Որոշ մարզագույքի պակաս՝ | |

| | | |
|---|---|---|
| ցատկապարաններ, պտտաձող, բարձրացատկ, ներքնակներ /6 հատ/, ցատկելու զսպանակ, վոլեյբոլի ցանց, բասկետբոլի զամբյուղ | թենիսի սեղան, այծիկ, նժույգ |  |

## Խոհանոց և ճաշարան

**Խոհանոցը /15մ²/ և ճաշարանը /20մ²/ , մթերքի համար նախատեսված պահեստները վերանորոգված են, կահավորված: Դպրոցի ճաշարանում տրամադրվում է տաք սնունդ 1-4 դասարանների աշակերտներին «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում ; Գործում է բոլոր սանիտարահիգիենիկ նորմերին համաձայն:**

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | |
|---|---|---|
| • Վերանորոգված<br>• Բարեկարգ<br>• Խոհանոցն ապահովված է անհրաժեշտ նոր գույքով և տեխնիկայով. կահահավորվել է **ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի միջոցներով.** | • Ճաշարանի փոքր տարածք |   |

| | | |
|---|---|---|
| • Ճաշարանի նոր սեղան-աթոռները ձեռք են բերվել **համայնքապետարանի աջակցությամբ /2023թ. սեպտեմբեր/**<br>• Անհրաժեշտ սպասքի առկայություն<br>• 2 առանձին վերանորոգված պահեստներ | |  |

Դասարաններ - **15 դասասենյակ- 483,3 մ²**

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դասարանները հիմնականում վերանորոգվել են, դռները և պատուհանները փոխարինվել են եվրոդռներով և եվրոպատուհաններով / 12 դասարան/ | • Որոշ դասարաններ չեն համապատասխանում սահմանված մակերեսին<br>• Որոշ դասարանների գույքի մաշվածություն, անհրաժեշտություն /5 դասարան՝ 130 աթոռ, 75 սեղան/ |

| | |
|---|---|
| • Երեք դասարան համալրվել է աշակերտական նոր գույքով, որից երկու դասարանի գույքը ձեռք է բերվել **ԾԻԳ ՊՀ**-ի միջոցով, մեկ դասարանի գույքը նվիրաբերել է հոլանդահայ բարերար **Տավրոս Ասլանյանը** | • Առաջին հարկի դասասենյակների /7 դասասենյակ/ հատակների փոխարինման անհրաժեշտություն՝ հատակների սնկային հիվանդության պատճառով<br>• Դասարանների մեծ մասում չկա ինտերնետ կապի հասանելիություն, որի անհրաժեշտությունը կա՝ ելնելով հատկապես նոր չափորոշչային պահանջներից<br>• Առարկայական դասասենյակներ չկան : |

## Հանդիսությունների դահլիճ

**Հանդիսությունների դահլիճը զբաղեցնում է 58,4 մ² տարածք, գտնվում է բարեկարգ վիճակում: Չնայած տարածքի փոքրությանը՝ դահլիճում հաճախակի են կազմակերպվում տարբեր բնույթի միջոցառումներ, սեմինարներ, քննարկումներ, հանդիպումներ, կազմակերպվում են տեսանյութերի, ֆիլմերի դիտումներ:**

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | |
|---|---|---|
| • Վերանորոգված է<br>• Smart հեռուստացույցի առկայություն<br>• 1 դաշնամուր<br>• Ուժեղացուցիչ, բարձրախոս<br>• Տեղադրված է **80 նոր աթոռ** հանդիսատեսի համար/ ձեռք է բերվել ԾԻԳ ՊՀ-Ի կողմից/ | • Տարածքի և բեմի փոքր լինելը<br>• Պրոյեկտորի և դյուրակիր համակարգչի անհրաժեշտություն |  |

## Լաբորատորիա - 25,1մ$^2$

Դպրոցն ունի բնագիտական առարկաների մեկ լաբորատորիա՝ ոչ համապատասխան գույքով , սարքավորումներով և նյութերով, որոնք ձեռք են բերվել դպրոցի և դասավանդող ուսուցիչների աջակցությամբ: Համապատասխան տեղեկատվություն ենք ներկայացրել ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ին՝ անհրաժեշտ սարքավորումներով, նյութերով և գույքով օժանդակել կահավորելու ֆիզիկայի, աշխարհագրության, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաները՝ ԲՏՃՄ առարկաներն աշակերտների համար հետաքրքիր և հաղթահարելի դարձնելու համար, քանի որ այդ ուղղություններով կրթությունը հանրակրթության պետական նոր չափորոշչի ամենակարևոր բաղադրիչներից մեկն է: Այժմ դպրոցն ընդգրկվել է 2024թ. առարկայական վերանայված ծրագրերին և չափորոշիչներին համապատասխանող ժամանակակից բնագիտական և ինժեներական լաբորատոր սարքավորումներով և գույքով համալրման ենթակա դպրոցների ցանկում:

## Արհեստանոց- 36,6մ$^2$

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | |
|---|---|---|
| ● Վերանորոգված է<br>● Հաստոց փականագործի - 5<br>● Ռանդա - 3<br>● Սղոց - 3<br>● Դուր - 4<br>● Մուրճ - 3<br>● Խարտոց - 6<br>● Էլեկտրական պտուտակահան - 1<br>● Գայլիկոն - 1 | • Կարիք կա գույքի համալրման |  |

## Շախմատի դասասենյակ – 30,7մ²

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | |
|---|---|---|
| • Շախմատային գույքի առկայություն | • Գույքի նորացման կարիք կա |  |

## ՆԶՊ սենյակ- 28,4մ²

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | |
|---|---|---|
| • Վերանորոգված է<br>• Ուսումնական զենք AK-75<br>• Օդամղիչ հրացան<br>• Հակագազ 60 հատ<br>• Ուսումնադիդակտիկ պաստառներ<br>• Տեսաերիզներ<br>• Զինպահեստ/ ազդանշանային համակարգով/<br>• Շարահրապարակ | • Սենյակի տարածքը փոքր է<br>• Չկա հրաձգարան<br>• Պրոյեկտոր<br>• Դյուրակիր համակարգիչ |  |

# 6. Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Դպրոցը սերտորեն համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ: Դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:

Դպրոցի կառավարման մարմիններն են՝

●Հիմնադիրը

●ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը

●Միացյալ կառավարման խորհուրդ / Գյուլագարակի միջնակարգ դպրոց, Հոբարձու միջնակարգ դպրոց/՝ բաղկացած 14 անդամներից- 2021թ.-ից

●Գործադիր մարմինը /տնօրեն, այսուհետև նաև համակարգող/

Դպրոցի կառավարումն իրականացվում է համաձայն կանոնադրության, տնօրենի կողմից պլանավորված ծրագրի և այլ իրավական ակտերի:Դպրոցի լիազոր մարմինը Լոռու մարզպետարանն է, որն իրականացնում է ընդհանուր կառավարումն ու վերահսկողությունը:

Կառավարման խորհուրդը և տնօրենը մշտապես արդյունավետ համագործակցում են՝ ի շահ դպրոցի: Բոլոր նիստերն արձանագրվում են, ԿԽ-ն իրականացնում է կանոնադրությամբ իրեն վերապահված բոլոր գործառույթները.

2019—2023թթ. –Կառավարման խորհրդի կողմից իրականացված աշխատանքներ

1.Հաստատել է իր աշխատակարգը, ընտրել նախագահ

2.Իրականացրել է տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն

3.Հաստատել է դպրոցի ներքին կարգապահական, աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները , ԿԱՊԿՈւ աշակերտների ցուցակը

4.Քննարկել է ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները

5.Հաստատել է ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, հավանություն տվել և ներկայացվել է լիազորված մարմնին

6.Վերահսկել է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը՝ քննարկելով տնօրենի կողմից ներկայացված հաշվետվությունները

7.Իրականացրել է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ

Դպրոցի տնօրենը

1.Կխ բոլոր նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով, խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները, ներքին գնահատման արդյունքները, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը

2.Կազմում է տարիֆիկացիան, հաստիքացուցակը, նախահաշիվը, ներկայացնում խորհրդին, խորհրդի հավանությամբ՝լիազոր մարմնին

3.Աջակցում է դպրոցի բոլոր խորհրդակցական մարմինների աշխատանքներին:

4.Մանկավարժական խորհրդին ներկայացմամբ հաստատում է ուսպլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, տեղակալի, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալի, ԴԱԿ-ի, դասղեկների, մ/մ նախագահների և մանկավարժների հաշվետվությունները:

5.Սահմանված կարգով մշակում և խորհրդի հավանությանն է ներկայացնում ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները;

6.Իրականացնում է ներդպրոցական վերահսկողություն՝ ՆԴՎ պլանին համապատասխան, ապահովում է արտադասարանական խմբակների գործունեությունը, պատասխանատվություն կրում որակի և բովանդակության համար

7.Դպրոցում ապահովում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:

8. Իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված բոլոր գործառույթները:

## Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ●Կառավարման կոլեգիալ մարմնի՝ խորհրդի բոլոր անդամներն ունեն բարձրագույն կրթություն,<br><br>●Կառավարման խորհուրդը գործում է հաստատության կանոնադրության և այլ իրավական ակտերին համապատասխան<br><br>●Խորհրդի հավանությանն է ներկայացվում մանկավարժահոգեբանական ծառայությունների և ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը ։<br><br>●Դպրոցի զարգացման ծրագրի կատարողականության և ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունների պարբերաբար քննարկում<br><br>●Խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարողականություն, կարգով վերապահված գործառույթների շրջանակներում գործունեության իրականացում՝ ի շահ դպրոցի։ | ● Խորհրդի անդամների՝ օրենսդրական փոփոխությունների մասին պակաս ինֆորմացված լինելը, իրավական ակտերի հաճախակի փոփոխություններին ոչ լիարժեք տիրապետելը:<br>●Նախաձեռնողականության պակաս |

## Մանկավարժական խորհրդի գործունեությունը

Դպրոցի կառավարման, կրթական գործունեության իրականացման, կրթության որակի ապահովման համար շատ կարևոր նշանակություն ունեն խորհրդակցական մարմինները՝ մանկավարժական խորհուրդը, ծնողական և աշակերտական խորհուրդները: Մանկավարժական խորհուրդը պատշաճ կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները :

●Ըստ սահմանված կարգի՝ առնվազն երկու ամիսը մեկ անգամ, պատշաճ ձևով կայանում են մանկավարժական խորհրդի նիստերը: Անհրաժեշտության դեպքում կայանում են արտահերթ նիստեր:

●Նիստերին երբեմն մասնակցում են ծնողական, աշակերտական խորհուրդների նախագահները, ներկայացրել առաջարկներ:

●Քննարկվում են կրթության որակի, ուսումնական միջավայրի, մանկավարժների մասնագիտական որակների բարձրացման, ուսուցիչների կամավոր ատեստավորման, տարակարգի, դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներքին կարգապահական կանոնների հետ կապված հարցեր:

●Մշտական քննարկման և ուշադրության կենտրոնում է նոր կիրառվող ՀՊՉ-Ն :

## Առարկայական մեթոդական միավորումներ

1. Դպրոցում ձևավորվել են 4 առարկայական մեթոդական միավորումներ՝
   ա/ հումանիտար
   բ/ բնագիտամաթեմատիկական
   գ/ տարրական կրթություն
   դ/ օտար լեզուներ

Մեթոդական միավորումների նիստերը կազմակերպվում են ժամանակին՝ ըստ սահմանված կարգի ամիսը մեկ անգամ և արձանագրվում : Քննարկվում են ուսումնադաստիարակչական տարբեր հարցեր, արվում են առաջարկություններ:

## Ծնողական    խորհուրդ

Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից, ովքեր ընտրվում են դասարանների ծնողական ժողովների կողմից մեկ ուսումնական տարվա համար: Դպրոցի ծնողական խորհուրդը բաղկացած է 15 անդամից, նախագահ՝ Լիանա  Շահինյան:

Ամբողջ տարվա ընթացքում դպրոցական խորհուրդը մասնակցում է կրթական գործընթացի աջակցմանը, սոցիալապես անապահով երեխաների օգնության կազմակերպմանը, ապահովում դպրոց-համայնք կապը: Խորհրդի կողմից բարձրացվում են դպրոցի գործունեության հետ կապված հարցեր, ստացվում պարզաբանումներ և ներկայացվում առաջարկություններ: Ակտիվ մասնակցում է ներքին գնահատման հանձնաժողովի աշխատանքներին, ներկայացնում առաջարկներ;

## Աշակերտական    խորհուրդ

Սահմանված կարգով  դպրոցում կազմավորվել է ինքնակառավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված աշակերտական խորհուրդ `բաղկացած 18 աշակերտից, նախագահ՝ Նանե Մատինյան:

Ձևավորվել է 6 հանձնախումբ՝

1.ուսումնադաստիարակչական

2.իրավակարգապահական

3.ռազմահայրենասիրական

4.առողջապահական

5.մշակութային

6.սոցիալական

Ըստ կանոնադրության՝ կայանում են աշխորհրդի նիստեր և արձանագրվում:

Դպրոցում կարևորվում է աշակերտական ինքնակառավարումը, կազմակերպվում են հանդիպումներ, լուծում տրվում ներկայացվող խնդիրներին:

Աշակերտական խորհուրդն ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով:

Կազմակերպում է միջոցառումներ, մասնակցում հանրօգուտ աշխատանքների, հանդես գալիս առաջարկություններով:

## Խորհրդակցական մարմինների գործունեության վերլուծություն

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցում ապահովված են ժողովրդավարական կառավարման սկզբունքները, դպրոցում գործող խորհրդակցական մարմիններն ակտիվորեն ներգրավված են կառավարման գործընթացում:<br>• Սերտ է համագործակցությունը համայնքի, դպրոցի տնօրենության և խորհրդակցական մարմինների անդամների հետ, պատրաստակամ են ստեղծել արդյունավետ աշխատանքային միջավայր, սատարել ընթացիկ խնդիրների լուծմանը:<br><br>• Մանկավարժական խորհուրդը սահմանված ժամկետներում, երկամսյա պարբերականությամբ իրականացնում է հերթական նիստեր, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ արտահերթ նիստեր:<br>• Կրթական գործընթացը կազմակերպվում է արդյունավետ:<br>• Հանրակրթական պետական ծրագրերը իրականացում են պատշաճ:<br>• Ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության, որակի, նրանց հետ տարվող | • Երբեմն խորհրդակցական մարմինների նախաձեռնողականության պակաս:<br>• Տեղեկատվական հարթակների բազմազանության մեջ ոչ ճիշտ կողմնորոշվելը<br><br>•Նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացման փորձի պակաս |

| | |
|---|---|
| արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերը, ուսումնական հաստատության ռեժիմը և այլ կարևորագույն հարցեր քննարկվում և հաստատվում են մանկավարժական խորհրդում։<br>Կարևորվում է մանկավարժական խորհրդի անդամների ակտիվ մասնակցությունը քննարկումներին, առաջարկների ներկայացումը, տեղեկացվածությունը։ Ըստ անհրաժեշտության կազմակերպվում են սեմինարներ, քննարկումներ, վեր են հանվում մանկավարժական համակազմի առջև ծառացած խնդիրները։<br><br>●Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ;<br><br>●Սկսնակ ուսուցիչների հետ մասնագիտական, մեթոդական քննարկումներ, վերլուծություններ։<br><br>●ՆԴՎ պլանով սահմանված վերահսկողական գործառույթների իրականացում։<br><br>• Աշակերտական խորհուրդը ակտիվ է և գործում է ժողովրդավարական հիմունքներով, հաճախ կազմակերպում է միջոցառումներ։ Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը։<br>• Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին։ Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով | • Աշակերտական խորհուրդը կարող է լինել առավել նախաձեռնող, ստեղծագործ և ակտիվ ներգրավվել նաև ներհամայնքային կյանքին։ |

| | |
|---|---|
| մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Սահմանված կարգով գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:<br><br>• Ծնողական խորհուրդը մտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին:<br>• Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը՝ հստակ օրակարգերով:<br>• Դպրոց- ծնող առողջ համագործակցություն<br>• Հաճախակի են ծնողխորհրդի և մանկավարժական աշխատողների հանդիպումները, իրազեկման և տեղեկատվական միջոցառումները:<br>• Ակտիվ մասնակցություն արտադպրոցական և արտադասարանական միջոցառումների կազմակերպմանը<br>• Խորհրդակցական մարմինների գործունեության համար ստեղծված են նպաստավոր պայմաններ, պարբերական հանդիպումների միջոցով ապահովվում է հնարավորությունը բարձրաձայնելու ծառացած խնդիրները, դիրքորոշում արտահայտելը, համատեղ ջանքերով գտնել դրանց լուծումները: | • Անտարբեր ծնողների որոշակի քանակ<br><br>• Մոտիվացիայի, նախաձեռնողականության պակաս<br><br>• Թերի է ծնողների գործուն մասնակցությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին, ներհամայնքային միջոցառումներին:<br><br>• Երեխայի դաստիարակության պահանջների ոչ լրիվ գիտակցում |

# 7. Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցի իրատեսական գործունեության , կրթության իրականացման, ՀՀ ապագա կարողունակ և մրցունակ քաղաքացու ձևավորման գործում մեծ ազդեցություն ունի աշակերտների մասնակցությունը համայնք- դպրոց , կրթության կառավարման մարմիններ – դպրոց և այլ շահառու կազմակերպությունների հետ համագործակցություններում:

Դպրոցն իր հերթին մեծ դեր ունի համայնքի հոգևոր-մշակութային զարգացման, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ պահպանելու, գիտելիք և արժեք փոխանցելու հարցում:

Համայնքը և դպրոցը մշտապես գտնվում են սերտ կապի մեջ.: Դպրոցում մշտապես կազմակերպվում են մշակութային միջոցառումներ՝ ազգային, պետական տոներին, հիշատակի օրերին, հոբելյանական տարելիցներին նվիրված, շաբաթօրյակներ, ծառատունկ, իրականացվում են նախագծային աշխատանքներ:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցը կատարում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, լիազոր մարմնի՝ Լոռու մարզպետարանի՝ օրենքին չհակասող հանձնարարականների կատարումները, ակտիվ մասնակցում է համայնքային տարբեր միջոցառումների /մշակութային, սպորտային/, քննարկումների, սեմինարների:<br>• Համայնքապետարանը ևս համագործակցում է դպրոցի հետ, իր լիազորությունների շրջանակներում գտնվող հարցերին աջակցում: **Համայնքապետարանի աջակցությամբ ձեռք են բերվել դպրոցի ճաշարանի սեղան-** | •Մշակութային միջոցառումների սակավ քանակ: |

| | |
|---|---|
| **աթոռները, մուտքի դուռ-պատուհանները փոխարինվել են եվրոդռներով և եվրոպատուհաններով, պարբերաբար աջակցություն է իրականացվել դպրոցի սոցիալապես անապահով, ծնողազուրկ աշակերտներին:**<br><br>• Սերտ է համագործակցությունը համայնքի **Արվեստի դպրոցի հետ** /աշակերտները մասնակցում են տարբեր խմբակների՝ պարի, կերպարվեստի, երաժշտության/, սովորում են նվագել տարբեր երաժշտական գործիքներ:<br><br>• **ՀՀ կրթության տեսչական մարմնի** ստուգումների արդյունքների ուսումնասիրությունները նպաստում են աշխատանքային գործընթացում թերացումներ չլինելուն:<br>• Մեծ է դպրոցի ուսուցիչների և վարչական կազմի ընդգրկվածությունը **ԿԶՆԱԿ** հիմնադրամի կողմից կազմակերպված վերապատրաստումներին՝ կապված նոր չափորոշիչների ներդրման, **ՆԴՎ**-ի հետ:<br>• Դպրոցը արդյունավետ համագործակցում է նաև **ԳԹԿ-ի** հետ՝ քննական գործընթացների պատշաճ կազմակերպման և տարբեր առարկաներից պարբերաբար տրվող գրավոր աշխատանքների միջոցով արդյունքները վերլուծելու:<br>• Դպրոցը ակտիվորեն համագործակցում է **«Մասնակցային դպրոց», «Դասավանդիր Հայաստան», «Ինտերակտիվ կրթություն», «Կանթեղ», «Այբ»** կրթական կառույցների հետ, **Վանաձորի , Երևանի պետական համալսարանների** և կրթական այլ կառույցների, ինչպես նաև համայնքի դպրոցների հետ:<br>• Դպրոցը համագործակցում է **ՀՀ ԿԳՄՍՆ, Լոռու մարզպետարանի, ՀՀ Կրթության տեսչական մարմնի, ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՀՄԿ-Ի, Ստեփանավանի ՏՄԱԿ-ի հետ, Ստեփանավանի ոստիկանության անչափահասների բաժնի, Ստեփանավանի № զորամասի, ԱԻՆ-ի, ՀՀ Ֆուտբոլի և** | • Համագործակցությանան ընդլայնմանան անհրաժեշտություն կա մարզային, հանրապետական , միջազգային դպրոցների հետ : |

| | |
|---|---|
| **Շախմատի ֆեդերացիաների , <<Աստղիկ>> հիմնադրամի** և այլ կառույցների հետ։<br>• Դպրոցը ակտիվորեն համագործակցում է նաև ծնողական համայնքի հետ, լսում նրանց առաջարկությունները մասնակցում խնդիրների բացահայտմանը և լուծմանը։<br>• Ծնողական համայնքը ակտիվ է , մասնակցում են ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավմանը, աջակցում դասարանական միջոցառումների, էքսկուրսիաների , արտադպրոցական միջոցառումների կազմակերպմանը ։<br>• Բոլոր միջոցառումները հրապարակվում են դպրոցի էջում։<br>• Ծնողները դիմում են հաստատություն իրենց երեխայի կարիքները գնահատելու , մանկավարժահոգեբանական աջակցություն ցուցաբերելու և տնային ուսուցում կազմակերպելու համար<br>• Դպրոցը հաշվի է առնում ծնողների դիմումները , նոր չափորոշչային պահանջներին համապատասխան կազմակերպում է նաև երկարօրյա ուսուցում անբավարար գնահատական ունեցող և ԿԱՊԿՈւ աշակերտների համար՝ հաշվի առնելով կարիքները ։ | |

# Ուսումնական միջավայր

Սովորողների կրթական գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ է անվտանգ, ապահով , հարմարավետ, մոտիվացնող միջավայր, նյութատեխնիկական բազա, մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև սովորողների առողջության ամրապնդման և ֆիզիկական զարգացման անհրաժեշտ պայմաններ, հավասարության ապահովում:

Դպրոցի զարգացման ծրագրում պլանավորված քայլերը միտված են ապահովելու անհրաժեշտ ուսումնական միջավայրը:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ●Դպրոցն ապահովում է կրթական ծրագրերի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, , սովորողների ֆիզիկական զարգացման և առողջության ամրապնդման համար պայմաններ:<br><br>●Շենքային պայմանների բարելավման և նյութատեխնիկական բազան հարստացնելու, աննհրաժեշտ պայմաններ ապահովելու ուղղությամբ տարվող շարունական աշխատանքներ<br><br>●Համակարգչային սենյակի, ինտենետ կապի /2 տեսակ/ առկայություն<br><br>●Առողջ ֆիզիկական և հոգեբանական միջավայրի | ● Դպրոցական շենքը հարմարեցված է, չկան նորագույն նյութատեխնիկական բազայով հագեցած առարկայական դասասենյակներ<br><br>●Հարմարեցված սանհանգույցի բացակայություն<br><br>●Սպորտային խմբակների բացակայություն |

| | |
|---|---|
| առկայություն<br><br>●Գործում է ամենօրյա վերահսկողություն հաճախումների վերաբերյալ, ճշտվում են պատճառները, անհրաժեշտության դեպքում ձեռնարկվում կանխարգելիչ միջոցառումներ:<br><br>● Հակահրդեհային անվտանգության միջոցներ առկայություն. միջանցքներում փակցված են արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման պլանները: Անձնակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու հմտություններին: Առկա է ՔՊ պլան, ԱՌԿ պլան, որի համաձայն կազմակերպվում են սեմինարներ, զրույցներ, տարհանումներ:<br><br>●Հավասար պայմանների ապահովում բոլոր սովորողների համար<br><br>●Ծնող-դպրոց կապի կարևորում արտադասարանական, արտադպրոցական կրթության կազմակերպման հարցում<br><br>●Մասնակցային կառավարում | |

# Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացման ապահովող միջոցառումները

Գյուլագարակի միջն. դպրոցում դասավանդում է 28 մանկավարժ: Մասնագիտական որակների և մեթոդական հմտությունների զարգացումն ապահովելու նպատակով ուսուցիչները մշտապես մասնակցում են տարբեր վերապատրաստումների, ծրագրերի, նախագծերի: Ընդգրկված են ԿԶՆԱԿ_ի, ՀՄԿ_ի, , մենթոր դպրոցի կողմից անցկացվող սեմինարներում , վերապատրաստումներում, ծրագրերում: Յուրաքանչյուր տարի 5 ուսուցիչ մասնակցում է հերթական ատեսատավորմանը: 2023թ. տնօրենը, տեղակալները և ուսուցիչները մասնակցել են 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում նոր չափորոշչի ներդրմամաբ պայմանավորված վերապատրաստումներին՝ առկա և հեռավար ձևաչափով: Աշխատանքը դպրոցում կազմակերպվում է թիմային և մասնակցային ձևով: Տնօրենության, մ/մ նախագահների կողմից պարբերաբար իրականացվում են դասալսումներ, քննարկումներ, , վերլուծություններ:

Դպրոցում աշխատում են և՛ փորձառու, և՛ սկսնակ ուսուցիչներ, մեծամասնությունը կանայք են , ունենք նաև բռնի տեղահանված 4 ուսուցիչ/ 2 ուսուցիչը գործուղվել են ԿԳՄՍ նախարարության կողմից/: Ուսուցիչների տարիքը տոկոսային հարաբերությամբ՝



**Առարկայական մեթոդական մասնախմբերը 4-ն են՝**

ա/ հումանիտար

բ/ բնագիտամաթեմատիկական

գ/ տարրական կրթություն

դ/ օտար լեզուներ

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցում աշխատանքը կազմակերպվում է համագործակցային, թիմային և մասնակցային ձևով, ինչը նպաստում է ընդհանուր նպատակների իրականացմանը, կառավարումն իրականացվում է ժողովրդավարական ոճով:<br>• Հաստատությունում ուսուցչի թափուր հաստիք չկա. բոլոր առարկաները դասավանդում են համապատասխան կրթություն ունեցող մասնագետներ:<br>• Դասավարող **28** ուսուցիչներից **27**-ը ունի բարձրագույն մասնագիտական կրթություն, միայն **1** ուսուցիչ /<<տեխնոլոգիա >>առարկա/՝ մ/մ, ով անցել է կամավոր ատեստավորում և ցուցաբերել 82,5 % արդյունք:<br>• Դպրոցի բոլոր չորս մեթոդմիավորումների աշխատանքը համակարգված է, իրականացվում է սկսնակ ուսուցիչների ուղղորդում և աջակցություն՝ մեթոդական, մասնագիտական և այլ:<br>• Դպրոցի ուսուցիչները վերապատրաստված և | • Ուսուցիչների պասիվ մասնակցություն տարբեր նախագծերի, քննարկումներին օրինակելի իրավական ակտերի վերաբերյալ:<br>• Նորարական մոտեցումներով դասեր վարելիս երբեմն դժվարություններ ունեցող բազմափորձ ուսուցիչներ;<br>• Ուսուցիչները խուսափում են կամավոր ատեստավորմանը մասնակցելուց: / Դեռևս 2 հոգի են:/<br>• Ինքնազարգացմանն ուղղված քայլերի պակաս:<br>• Նախաձեռնողականության, ինքնուրույնության պակաս: |

| | |
|---|---|
| ատեստավորված են:<br><br>• Վերապատրաստումները կրում են շարունակական բնույթ. ՀՄԿ-Ի կողմից ներկայում իրականացվում է <<Ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում >> ծրագրի շրջանակներում մանկավարժների 140 - ժամյա վերապատրաստում , որը տևելու է մինչև ս.թ. մայիսի 24-ը:<br><br>• << Կզնակ>> հիմնադրամի և մենթոր դպրոցի կողմից պարբերաբար իրականացվում են խորհրդատվական սեմինարներ<br><br>• Ուսուցիչներից երկուսը անցել են կամավոր ատեստավորում /տեխնոլոգիա, երաժշտություն/:<br><br>• **Դպրոցում տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, փոխօգնության մշակույթ. հատկապես ուշադրության կենտրոնում են բռնի տեղահանված չորս ուսուցիչները :**<br>• Հաճախակի են իրականացվում ինտեգրված և բաց դասեր, համատեղ միջոցառումներ, փոխադարձ դասալսումներ:<br>• Ուսուցիչները տիրապետում են ՏՀՏ միջոցներին, օգտվում էլեկտրոնային պաշարներից, անհրաժեշտության դեպքում իրականացնում հեռավար ուսուցում:<br>• Ուսուցիչները քաջատեղյակ են նոր չափորոշչային պահանջներին, դասերն անց են կացնում աշակերտակենտրոն, դասաժամերին օգտագործում են ՏՀՏ միջոցներ, իրականացնում են նախագծային և | • Որոշ ուսուցիչներ խուսափում են բաց դասեր, միջոցառումներ կազմակերպելուց:<br>• Առարկայական օլիմպիադաներում ցածր արդյունքներ մարզային փուլում:<br>• Ուսուցիչների լրացուցիչ աշխատանքի պակաս օլիմպիադաներին մասնակցող աշակերտների հետ: |

| | |
|---|---|
| հետազոտական աշխատանքներ։<br>• Դպրոցի տնօրենությունը պարբերաբար անց է կացնում խորհրդատվական հանդիպումներ, իրականացնում վերահսկողական աշխատանքներ, խրախուսում կամավոր ատեստավորման գործընթացին մասնակցությունը և տարակարգ ստանալը։<br>• Հաճախակի են իրականացվում մշտադիտարկումներ, արդյունքների վերլուծություններ ՆԴՎ-ի շրջանակներում, աջակցություն է ցուցաբերվում նոր հմտությունների, մեթոդների կիրառմանը։ | |

Մանկավարժները հիմնականում տեղացի են, ունենք նաև Ստեփանավանից /2 ուսուցիչ/ և Վանաձորից եկող ուսուցիչներ /5 ուսուցիչ/, նրանց ճանապարհածախսը փոխհատուցվում է։ Բոլոր ուսուցիչները հիմնականում ապահովված են մեկ դրույքով, ունենք նաև ծանրաբեռնված ուսուցիչներ՝ 1,5 դրույք՝/ մաթեմատիկա, պատմություն /։

## 9.Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացում

ՏՀՏ-ները դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք։ Ժամանակակից կրթական համակարգում դրանք խթանում են ստեղծագործ մտածողությունը, , օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, , բարձրացնել առաջադիմությունը, և հետաքրքրվածությունը։ Դրանք նպաստում են մանկավարժների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու ՏՀՏ հմտությունների զարգացմանը։ Որպեսզի բարելավվի ու կատարելագործվի ուսումնական գործընթացը, պետք է կարևորել ՏՀՏ –ների առավել կիրառումը։

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Հաստատությունում կարևորվում է ՏՀՏ տեխնոլոգիաների և էլեկտրոնային կրթական ռեսուրսների ներդրումը կրթական պրոցեսում։ | • Համակարգիչների , պլանշետների , դյուրակիր համակարգիչների և պրոյեկտորների ,տպիչների թիվը քիչ է ։ |

- Դպրոցում առկա է երկու տեսակի ինտերնետային կապ, 24 համակարգիչ
- 3 պլանշետ
- 1դյուրակիր համակարգիչ
- 1 էլեկտրոնային գրատախտակ
- 1 պրոյեկտոր

ա/ Հաստատության **ուսումնադաստիարակչական** աշխատանքներին նպաստում են հետևյալ կրթական կայքերը, որոնց մասին ուսուցիչներն իրազեկված են և օգտվում են նշված կայքերից.

- << Հայկական կրթական միջավայր >>
- ԿՏԱԿ ՝ըստ իր դասակարգված բաժինների
- << Պաշարների շտեմարան >>
- <<Կզնակ >> հիմնադրամի
- Տարբեր սեմինարների , վեբինարների միջոցով շարունակական աշխատանք է տարվում ՏՀՏ գործիքների կատարելագործման ուղղությամբ, ՀՀ ԿԳՄՍՆ երաշխավորությամբ իրականացվող ծրագրերի մասին ուսուցիչների իրազեկվածության վերաբերյալ

Ուսուցիչները տիրապետում են MS Teams, Zoom միասնական կրթական հարթակներին

Կարևոր նշանակություն ունի նաև <<Արմաթ >> լաբորատորիան , որի դասընթացներին հաճախում են մեծ թվով աշակերտներ, սովորում են խելացի սարքերի նախագծում և ծրագրավորում , տիրապետում են եռաչափ և լազերային տպագրության աշխատանքներին , մասնակցում ռոբոտաշինության մրցութային տարբեր միջոցառումների ՝ գրանցելով բարձր արդյունքներ

- ՏՀՏ տեխնոլոգիաների կիրառմամբ դասեր իրականացվում են , սակայն դեռևս ոչ բոլոր ուսուցիչներն են ապահովում ժամանակակից կրթական պահանջները
- Գրադարանը թվայնացված չէ
- Դեռևս քիչ է էլեկտրոնային դասագրքերից օգտվողների թիվը

| | |
|---|---|
| Ակտիվ ուսումնառության կազմակերպմանը իր նյութատեխնիկական պաշարներով նպաստում է դպրոցի համակարգչային դասասենյակը<br><br>**Բնագիտական առարկաներից իրականացվում է էլեկտրոնային դիտափորձերի և էլեկտրոնային քարտեզների ցուցադրում**<br><br>բ/ Հաստատության **վարչատնտեսական** գործունեություն<br><br>Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ >> -ի վարչական ռեգիստրում ներառված են մեր հաստատության գտնվելու վայրի ,կառուցվածքի, ենթակառուցվածքների, մասնաշենքերի քանակի ,ունեցած ուսումնական պարագաների , սովորողների, դասարանների թվի ,հաստիքացուցակի և այլ անհրաժեշտ տեղեկություններ :<br>Նորացվել է սովորողներին դպրոցից դպրոց տեղափոխելու գործընթացը<br>Պետական նմուշի ավարտական փաստաթղթերը տրամադրվում են էլեկտրոնային եղանակով : | |

# 10. Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

Նոր չափորոշչով կրթության նորովի կազմակերպման ռազմավարություն է հանդիսանում կարողունակությունների վրա հիմնված կրթությունը, որն իրենից ներկայացնում է գիտելիքների ,հմտությունների ,դիրքորոշման և արժեքային համակարգ : Ուսուցիչները պետք է հստակ պատկերացնեն նոր չափորոշչի պահանջը և ճիշտ կատարեն առարկայի ուսուցման պլանավորումը ,դասավանդումը, գնահատումը: Դպրոցը շարունակական և հետևողական աշխատանք է տանում կրթության

որակի և  արդյունավետության ուղղությամբ: Նոր չափորոշչով քայլ առ քայլ անցում է կատարվում գիտելիքահեն կրթությունից կարողունակահեն կրթության:

Կրթության որակի  բարելավման ,որակի չափման ուղղությամբ կիրառվում են մի  շարք գործիքներ և միջոցառումներ դպրոցի ՆԴՎ պլանին  համապատասխան՝

Հայտորոշիչ  գրավոր աշխատանքներ

Թեմատիկ գրավոր աշխատանքներ

Դասալսումներ, մշտադիտարկումներ

Առարկայական  շաբաթներ,   առարկաների դասավանդման դրվածքի  ուսումնասիրություններ

Սովորողների առաջադիմության մասին ներկայացվում է մեթոդմիավորումների և մանկխորհրդի նիստերի ժամանակ, քննարկվում են ուսուցման  բովանդակության  փոփոխություններին  աշակերտների  հարմարեցման  անհրաժեշտությունն  ու ձևերը: Դասապրոցեսներին  ներդրվում  են նորագույն  տեխնոլոգիաներ,  կիրառվում  են  արդյունավետ  մեթոդներ:

2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ուսուցումը կազմակերպվում է նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան: Ուսպլանի անհատական բաղադրիչից 2-րդ դասարանում 2 ժամը հատկացվել է «Մոլորակի գույները» կերպարվեստի խմբակին, 5-րդ և 7-րդ դասարաններին հատկացված 6 ժամից՝ 5-րդ դասարան՝ «Երգչախումբ» խմբակ - 2 ժամ

«Առողջ ապրելակերպ» խմբակ - 1 ժամ

7-րդ դասարան՝ «Նախագծային ուսուցում» - 2 ժամ

«Առողջ ապրելակերպ» խմբակ - 1 ժամ

## Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2022-2023 ուսումնական տարում

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | | Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը | | | | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգմանն 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտականքննությունների միավորների միջինը | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ.դաս. | | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ.դաս. | | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս |
| Հայոց լեզու | | 31 | 7 | | | 5,4 | 6,5 | | | 10 | 11 |
| Մաթեմատիկա | 26 | | | 7.3 | | | | 7,8 | | 10 | 13 |
| Մայրենի | 26 | | | 7.6 | | | | 7,9 | | | |
| Գրականություն | | 31 | | | | 5.9 | | | | 11 | |
| Հայ գրականություն | | | 7 | | | | 6,5 | | | | |
| Ռուսաց լեզու | 26 | 31 | 7 | 6.5 | | 5.5 | 6.4 | | | 11 | |
| Ֆրանսերեն | | | | | | | | | | | |
| Անգլերեն | 26 | 31 | 7 | 6,8 | | 5,8 | 7 | | | 12 | |
| Ես և շրջակա աշխարհը | 26 | | | 7.5 | | | | | | | |
| Ֆիզկուլտուրա | 26 | 31 | 7 | 8.7 | | 7,4 | 8.1 | | | 8 | |
| Շախմատ | 26 | | | 6.7 | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երաժշտություն | 26 | | | 8.1 | | | | | | | |
| Կերպարվեստ | 26 | | | 8.1 | | | | | | | |
| Տեխնոլոգիա | 26 | | | 8 | | | | | | | |
| Աշխարհագրություն | | 31 | 7 | | | 6.4 | 7 | | | 9.5 | |
| Հայոց պատմություն | | 31 | 7 | | | 6 | 6.8 | | | 10.9 | 10 |
| Համաշխ. պատմություն | | 31 | 7 | | | 6 | 7 | | | | |
| Հայոց եկեղեցու պատմ. | | 31 | | | | 6.6 | | | | | |
| Հասարակագիտություն | | 31 | 7 | | | 6,6 | 8.4 | | | | |
| Հանրահաշիվ | | 31 | 7 | | | 5.3 | 6.2 | | | | |
| Երկրաչափություն | | 31 | 7 | | | 5,3 | 6.2 | | | | |
| Ինֆորմատիկա | | 31 | 7 | | | 5,9 | 7.4 | | | | |
| Ֆիզիկա | | 31 | 7 | | | 5,7 | 6.6 | | | | |
| Քիմիա | | 31 | 7 | | | 6 | 7 | | | 15 | |
| Կենսաբանություն | | 31 | 7 | | | 6 | 7 | | | 12 | |
| ՆԶՊ | | 31 | 7 | | | 7.8 | 8.8 | | | | |

## Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ

| Ցուցանիշ | 2020-2021 ուստարի | | | 2021-2022 ուստարի | | | 2022-2023 ուստարի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1-4 դաս. | 5-9 դաս. | 10-12 դաս. | 1-4 դաս. | 5-9 դաս. | 10-12 դաս. | 1-4 դաս. | 5-9 դաս. | 10-12 դաս. |
| Գերազանց և առաջավոր առաջադիմություն սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը տվյալ կրթական աստիճանում «7», «8», «9» և «10» տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ) | 37<br>28% | 37<br>24% | 7<br>14% | 47<br>36% | 55<br>32% | 10<br>29% | 54<br>54% | 52<br>30% | 5<br>15% |
| Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը տվյալ կրթական աստիճանում «4», «5» և «6» տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ) | 61<br>47% | 116<br>76% | 41<br>85% | 83<br>64% | 113<br>67% | 25<br>61% | 45<br>45% | 121<br>70% | 28<br>85% |

## Կրթության որակի նախորդ երեք տարիների ցուցանիշների դինամիկան.

Առաջադիմություն

| | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 /Ակիսամյակ/ |
|---|---|---|---|---|
| Ընդհանուր առաջադիմություն | 97% | 88% | 92% | 87% |
| Որակական առաջադիմություն | 36% | 38% | 36% | 26% |



| | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|
| Բուհ ընդունվող շրջանավարտներ | 7/26 | 4/11 | 3/7 |
| Օլիմպիադաների մարզային փուլի մասնակից աշակերտներ | 6 | 8 | 1 |




**2022-2023 ուստարում ԳԹԿ-ի կողմից 11-րդ դասարանում տրված գրավոր աշխատանքների /հայոց լեզու, մաթեմատիկա/ արդյունքները**

| Հայոց լեզու | | Մաթեմատիկա | |
|---|---|---|---|
| Որակ | 22% | Որակ | 13% |

| | | | |
|---|---|---|---|
| Առաջադիմություն | 89% | Առաջադիմություն | 72% |
| **Միջին գնահատականը- 5** | | **Միջին գնահատականը- 5** | |

**2022-2023 ուստարում տնօրենության կողմից բոլոր դասարաններում տրված գրավոր աշխատանքների /հայոց լեզու, մաթեմատիկա/ միջին գահատականը.**

| | Հայոց լեզու | Մաթեմատիկա |
|---|---|---|
| Տարրական դպրոց | 7 | 7 |
| Միջին դպրոց | 5 | 5 |
| Ավագ դպրոց | 6 | 5 |

**2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի վերջին տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների / հայոց լեզու, մաթեմատիկա/ միջին գնահատականը, որակը, առաջադիմությունը**

| Առարկա/ դաս. | IIIա | IIIբ | IV | V | VI | VIIա | VIIբ | VIIա | VIIIբ | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայոց լեզու<br>Որակ<br>Առաջադիմ. | 6<br>63 %<br>79 % | 7<br>68%<br>94% | 6<br>46%<br>100% | 7<br>60%<br>100% | 6<br>45%<br>71% | 5,5<br>44%<br>100% | 6,2<br>47%<br>100% | 6<br>42%<br>100% | 5,5<br>55%<br>72% | 4,6<br>29%<br>82% | 5<br>28%<br>89% | 6<br>31%<br>100% | 6,4<br>46%<br>91% |
| Մաթեմատիկա<br>Որակ<br>Առաջադիմ. | 7<br>68%<br>100% | 7,1<br>57%<br>100% | 5<br>31%<br>100% | 6,3<br>48%<br>92% | 6<br>39%<br>81% | 4,6<br>6%<br>95% | 4,6<br>6%<br>88% | 6<br>37%<br>84% | 5<br>28%<br>67% | 5<br>22%<br>72% | 5,3<br>17%<br>89% | 6<br>38%<br>85% | 5,5<br>27%<br>100% |

## ԿԱՊԿՈւ աշակերտներ

| | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|
| Թիվը | 24 / տն. ուսուցում-4 | 23/տն. ուսուցում-4 |
| Թեթև | 7 | 5 |
| Միջին | 12 | 10 |
| Ծանր | 5 | 7 |
| Խորը | 0 | 1 |

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Ուսումնական գործընթացի նպատակներն ու խնդիրները հստակ սահմանված են, ուսուցիչները և տնօրենությունը ծանոթ են հանրակրթական նոր չափորոշչի փուլային ներդրմանը, մասնակցել են ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացված վերապատրաստումներին:<br>• Առարկայական թեմատիկ պլանները և դասերի օրվա պլանները համապատասխանում են նոր չափորոշչային պահանջներին:<br>• Դասապրոցեսներին ներդրվում են նորագույն տեխնոլոգիաներ, կիրառվում նորարարական մեթոդներ: | • Որոշ դասարանների ծանրաբեռնվածություն:<br>• Որակական առաջադիմության ցածր ցուցանիշ:<br>• Նոր չափորոշիչների ներդրման հետ կապված որոշ ուսուցիչների մոտ դեռևս նկատվում են դժվարություններ:<br>• Որոշ առարկաների դասագրքերի բացակայություն:<br>• Ոչ հագեցած լաբորատորիա՝ ժամանակակից պահանջներին չհամապատասխանող<br>• Ծրագրային գրքերի պակաս:<br>• Բնագիտամաթեմատիկական առարկաների նկատմամբ հետաքրքրության պակաս |

| | |
|---|---|
| • Վեր են հանվում չկատարված կամ թերի կատարված գործողությունների պատճառները, տրվում են համապատասխան ցուցումներ:<br>• Դպրոցում գործում է արդյունավետ վերահսկողություն՝ առկա խնդիրների բացահայտման և կարգավորման նպատակով:<br>• Հաճախակի են կազմակերպվում առարկայական շաբաթներ, բաց դասեր:<br>• Տարբեր առարկաներից իրականացվում են նախագծային աշխատանքներ /մեկ առարկայից և ինտեգրված/:<br>• Ուսման մեջ ցածր առաջադիմություն ցուցաբերած և ԿԱՊԿՈՒ աշակերտների համար կազմակերպվում է երկարօրյա ուսուցում /2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում/:<br>• 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների աշակերտների համար իրականացվում են ուսումնական խմբակներ /կերպարվեստ, երաժշտություն/:<br>• Ապահովվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը վերապատրաստումների միջոցով: | |

# 11. Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն.

Մարդուն շրջապատող միջավայրը համարվում է նրա զարգացման վրա ազդող ամենակարևոր գործոններից մեկը: Կրթական բազմակարծիք, ներառական և մասնակցային միջավայրը ձևավորում է դաստիարակչական և մարդասիրական արժեհամակարգ: Սովորողների ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը պայմանավորված է միջավայրով, որից էլ բխում է ուսման նկատմամբ նրա վերաբերմունքը, նրա սոցիալականացումը, իրեն կոլեկտիվի և հասարակության լիարժեք անդամ համարելը:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցում ստեղծված է բարենպաստ կրթական միջավայր՝ անվտանգ և հարմարավետ, թե՛ աշակերտների, թե՛ աշխատակիցների համար: Միջավայրը մաքուր է, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան / համայնքի այլ գյուղերից մեր դպրոց հաճախող սովորողներ ունենք/<br>• Առկա է թեքահարթակ մուտքի մոտ<br>• Դպրոցը կարևորում է միջավայրի դերը, որը նպաստում է երեխաների շրջանում համակեցության մշակույթի ձևավորմանը և կանոնների յուրացմանը:<br>• Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների, ներդպրոցական վերահսկողության, առարկայական մասնախմբերի, դասղեկական աշխատանքների պլանավորումներն օգնում են իրականացնել ուսումնական ժամանակակից պահանջներին համապատասխան կրթական ծառայությունների ապահովումը:<br>• Կարևոր որոշումները, ընթացիկ աշխատանքները ներկայացվում են խորհրդակցական մարմիններում, տեղադրվում են դպրոցի կայքում և սոցիալական հարթակում՝ դրանով ապահովելով շահագրգիռ | • Աշակերտների կախվածությունը հեռախոսներից, |

| | |
|---|---|
| խմբերի իրազեկվածությունն ու մասնակցությունը։<br>• Ուսումնասիրվում է յուրաքանչյուր երեխայի վարքագիծը, սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա վրա, խրախուսվում յուրաքանչյուր երեխայի նախասիրություններն ու շնորհները։ Նոր չափորոշչային պահանջներին համապատասխան՝ գործում են ուսումնական խմբակներ՝<br>**<<Երգչախումբ>>**<br>**<<Մոլորակի գույները>>**<br>**<<Առողջ ապրելակերպ>>**<br>• Բոլոր դասարաններում ներկայացվել են երեխաների իրավունքներն ու պարտականությունները / Աշակերտները պաստառներ են պատրաստել, փակցրել դասարաններում /, խորհրդակցական մարմինների մասնակցությամբ քննարկված ու մշակված դպրոցի ներքին կարգապահական կանոնները<br>• Մշտապես ուշադրության կենտրոնում են պահվում աշակերտների հոգեկան և ֆիզիկական անվտանգությանն ուղղված աշխատանքները։ Դասղեկական աշխատանքային պլաններում ներառված են վնասակար սովորությունների, խտրականության դրսևորումների, միմյանց նկատմամբ ատելության , բռնության, բուլինգի կանխարգելմանն ուղղված թեմաներ<br>• Արդյունավետ է կազմակերպվում ԿԱՊԿՈՒ աշակերտների / 23 աշակերտ / կրթական գործընթացը. իրականացվում է նաև տնային ուսուցում 4 աշակերտի համար/ հոգեբան, ուսուցչի օգնականներ, Ստեփանավանի ՏՄԱԿ-ի աշխատակիցներ/։<br>• Լեռնային Ղարաբաղից տեղահանված, սոցիալապես | սոցցանցերից, համակարգչային խաղերից<br><br>• ԿԱՊԿՈՒ սովորողների համար հարմարեցումներ /հարմարեցված սանհանգույց/ |

| | |
|---|---|
| անապահով կամ սոցիալական բարդ իրավիճակում գտնվող աշակերտների հետ իրականացվում է համակարգված աշխատանք՝ համագործակցելով համապատասխան մարմինների հետ /համայնք, «Աստղիկ» հիմնադրամ/: | |

## 12.Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն.

Դպրոցի կառավարման առանցքում է նաև աշխատակազմի արժևորումն ու խրախուսումը արդյունավետ աշխատանքի համար: Դպրոցի կողմից մանկավարժների և նրանց աշխատանքի արժևորումը, մեծարումն ու գնահատումը, առողջ բարոյահոգեբանական միջավայրի ապահովումը բարձրացնում են նաև դպրոցի հեղինակությունը:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Կազակերպվում են վաստակաշատ ուսուցիչների մեծարման միջոցառումներ<br>• Դրամական և ոչ դրամական խրախուսումներ /շնորհակալագրեր, պատվոգրեր/<br>• Ուսուցիչների կամավոր ատեստավորման մասնակցելու խրախուսում<br>• Մասնագիտական վերապատրաստումներին մասնակցելու հնարավորություն և միջոցներ<br>• Ուսուցիչների հետազոտական աշխատանքների իրականացման և նորարական նախաձեռնություններին աջակցություն<br>• Հետևողականություն ուսուցիչներին ներառելու ինքնակրթության հնարավորություն տվող հարթակներում | • Այլ հաստատությունների ուսուցիչների հետ սեփական նախաձեռնությամբ մասնագիտական քննարկումների, առաջավոր փորձի պակաս<br>• Կամավոր ատեստավորմանը մասնակցելու ցանկություն ունեցողների սակավ թվաքանակ |

## 13.Ուսումնական ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության ցուցանիշների, շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից.

Դպրոցը այս ուսումնական տարվա սկզբին ֆինանսավորվել է կառավարության սահմանած նոր կարգով/ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 7.12.2022 N 79-Ն հրաման/.

- Բնագիտական առարկաներ դասավանդողներին տրվում է 25% հավելավճար
- Կամավոր ատեսավորում անցած 2 ուսուցիչների դրույքաչափը սահմանվել է 200000 դրամ, 82, 5 % արդյուք ցուցաբերած ուսուցիչն ստանում է նաև 40% հավելավճար
- Արցախից տեղահանված և ԿԳՄՍ նախարարության կողմից դպրոց գործուղված 2 ուսուցիչները ստանում են դրույքաչափի 30% հավելավճար

### Կատարված ծախսերը

| | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|
| Ֆինանսավորում | **74162,6**<br>/մնացորդ՝ 2020թ - 6056.3 / | **76672,2** | **80894,3** |
| Աշխատավարձ | **63817608 դրամ** | **66323930 դրամ** | 70893,1 |
| Կոմունալ վճարներ | 4164,5 | 3776,9 | 3336,9 |

| | | | |
|---|---|---|---|
| Գրասենյակային նյութեր | **352410 դրամ** | **249060 դրամ** | 295,9 |
| Կենցաղային նյութեր | 677,2 | 3133,3 /ներառյալ սննդի գումար/ | 3327,9 |
| Շինանյութ | 998,5 | 849,1 | 789,5 |
| Գույք | 1329,8 | 980,0 | 550,0 |
| Ճանապարհածախս | 758,0 | 936,2 | 954,7 |
| Վերապատրաստում | 113,6 | 192,0 | 96,0 |
| Մնացորդ | 5744,3 | 4403,7 | 5776,2 |

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| • Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը իրականցվում է հստակ և թափանցիկ: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում:<br>• Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են. աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ, կոմունալ վճարներ, գրասենյակային և տնտեսական ապրանքներ, գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր, հատուկ նպատակային ծախսեր և այլն:<br><br>.Դպրոցի ամբողջ գույքը հաշվառված է , կատարված է | • Առկա ֆինանսական ռեսուրսները հնարավորություն չեն ընձեռում առաջնահերթ խնդիրների միանգամից և առաջնահերթ լուծման համար: |

| | |
|---|---|
| գույքագրում<br><br>.Ռուցիչների միջին ծանրաբեռնվածությունը շաբաթական **26** ժամ է: Դրույքաչափը **123739** ՀՀ դրամ է | |

## 14. Առկա հիմնախնդիրները ըստ ոլորտների

| ՈԼՈՐՏ | ԽՆԴԻՐ |
|---|---|
| 1.Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան | Դպրոցի տանիքի վերանորոգում<br>.Մարզադահլիճի հատակի փոխարինում, վերանորոգում, անհրաժեշտ մարզագույքի ձեռքբերում<br>.Որոշ դասասենյակների հատակի փոխարինում<br>.Բնագիտական առարկաների լաբորատորիաների ստեղծում համապատասխան նյութերով ու սարքավորումներով<br>.ԿԱՊԿՈՒ սովորողների համար հարմարեցված միջավայրի ապահովում<br>.Համակարգիչների , պլանշետների , պրոյեկտորի թվի ավելացում<br>.Գրադարանային ֆոնդի նորացում, ծրագրային գրքերով համալրում, թվայնացում |
| 2.Կառավարման և խորհրդակցական մարմիններ | Համագործակցության ամրապնդում , նախաձեռնողականության խթանում |

| | |
|---|---|
| | |
| 3.Մանկավարժական անձնակազմ | Մասնագիտական և դասավանդման որակների բարելավում, կամավոր ատեստավորման և տարակարգի գործընթացների խթանում |
| 4.Աշակերտական համակազմ | Քննադատական, վերլուծական, ստեղծագործական մտածողության ձևավորում |
| 5.Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ | Համագործակցությունների ընդլայնում, սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում |
| 6.Ուսումնական միջավայր | Աշակերտների մոտիվացիայի խթանում, հաճելի կրթական միջավայրի ստեղծում |
| 7.Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների | Դասավանդման արդյունավետ միջոցների կիրառում, բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրվածության մեծացում, օլիմպիադաների առավել մասնակցության ապահովում, նախագծային աշխատանքների իրականացում, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ, արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների ակտիվացում |
| 8.Տեխնոլոգիաներ և նորարարություն | Նորագույն տեխնոլոգիաների առավել կիրառում դասապրոցեսներին, հագեցած ու ժամանակակից լաբորատորիաների ներդնում, ուսուցիչների |

| | |
|---|---|
| | մասնագիտական որակների շարունակական կատարելագործում |
| 9.Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը | Դրամաշնորհային ծրագրեր, արտաբյուջետային միջոցների ստեղծում |

## 15.ՆՊԱՏԱԿՆԵՐ և ԽՆԴԻՐՆԵՐ

### Նպատակ 1. Կրթական ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացում

ԽՆԴԻՐՆԵՐ 1. Դպրոցի շենքային պայմանների բարելավում, նյութատեխնիկական բազայի հարստացում. լաբորատոր սարքերի, գույքի, ուսումնական նյութերի, դիդակտիկ պարագաների, պաստառների ձեռքբերում, ՏՀՏ անհրաժեշտ միջոցների ձեռքբերում

2.Աշակերտների մոտիվացիայի խթանում

3.Մանկավարժական աշխատողների հմտությունների կատարելագործում, կրթական ծառայությունների արդյունավետության բարձրացում

4.Անվտանգ միջավայրի ապահովում և՛ դպրոցում , և՛ ընտանիքում՝ առանց բռնության, բուլինգի

5. Համայնքի կարիքների ներուժի օգտագործում

6.Երկարօրյա պարապմունքների կազմակերպում

| Գործողություններ և ակնկալվող արդյունքներ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ | ԺԱՄԿԵՏՆԵՐ | ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ | ՖԻՆԱՆՍԱՎԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|
| ●Շենքային պայմանների | Վարչատնտեսական մասի | ●Բարեկարգ | | Շինանյութ, անհրաժեշտ | Ֆինանսական | Կառավարման խորհուրդ, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| բարելավում /մարզադահլիճի և տանիքի վերանորոգում, դպրոցական շենքի ճակատային մասի և հետնամասի ծեփապատում, դասասենյակների հատակների փոխարինում/, ԿԱՊԿՈւ անձանց համար հարմարեցված սանհանգույց և դպրոցամերձ տարածքի բարեկարգում | համակարգող, տնօրեն | դպրոց և դպրոցամերձ տարածք | 2024-2027 | սարքավորումներ, գույք<br><br>Շինարարական կազմակերպություն ներ | միջոցներ /պետբյուջե, հովանավորներ, դրամաշնորհայի ն ծրագրեր/ | Լիազոր մարմին |
| ●Անհրաժեշտ ուսումնական նյութերի, առարկայական պաստառների, լաբորատոր գույքի, մարզագույքի ձեռքբերում | Տնօրենություն,խ որհրդակցական մարմիններ, ԿԶՆԱԿ | ●Ձեռք բերված ուսումնակա ն նյութեր, գույք | 2024-2026 | Դիդակտիկ պարագաներ, առարկայական պաստառներ, էլեկտրոնային ռեսուրսներ | պետբյուջե, հովանավորներ, դրամաշնորհայի ն ծրագրեր | Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող |
